<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1՝ Հավանականության արսիումատիկ սահմանումը,</p> <p>Թեմա 2՝ Հավանականության հատկությունները,</p> <p>Թեմա 3՝ Պատահականության անկախություն: Անկախ փորձեր,</p> <p>Թեմա 4՝ Պոլինոմիալ բաշխումներ: Հիպերերկրաչափական և Պուասոնյան բաշխումներ,</p> <p>Թեմա 5՝ Պատահական մեծություն և բաշխման ֆունկցիա,</p> <p>Թեմա 6՝ Պատահական մեծությունների թվային բնութագրիչները:</p> <p>Թեմա 7՝ Նկարագրական վիճակագրություն:</p> <p>Թեմա 8՝ Կետային գնահատականներ՝ հատկություններ, գնահատման մեթոդներ:</p> <p>Թեմա 9՝ Միջակայքային գնահատականներ:</p> <p>Թեմա 10՝ Վարկածների ստուգում՝ անհրաժեշտ գաղափարներ:</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <p>Kandethody M.Ramachandran, Chris P.Tsokos, Mathematical Statistics with Applications, Elsevier Academic Press.</p> <p>Ширяев А.Н., Вероятность, М. , "Наука", 2004,</p> <p>Б.В.Гнеденко. Курс теории вероятностей, Изд. 6-е, перераб. и доп. — М.: Наука. Гл. ред. физ.-мат. лит., 1988</p> <p>Gibbons J. D., Chakraborti S., "Nonparametric Statistical Inference", Marcel Dekker inc., 2003</p>

1. 1002/Մ94	2. Թվային մարքեթինգ և սոցիալական մեդիայի վերլուծություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. դասախոս.՝ 2 ժամ	
6. Առաջին կիսամյակ	7. Ստուգարք	
<p>8. Դասընթացի նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> • Զարգացնել ուսանողների մոտ սոցիալական մեդիայի վերլուծության ունակություններ, • Սովորեցնել ուսանողներին թվային մարքեթինգ՝ ապահովելով տեսական, մեթոդական և պրակտիկ-կիրառական գիտելիքներ: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնել և հիմնավորել սոցիալական մեդիայի վերլուծության ուսումնասիրման համար անհրաժեշտ գիտելիքները, 2. ստեղծել համապատասխան սոցիալական մեդիայի ռազմավարություն, որը կնպաստի բարձրացնել վաճառքների արդյունավետությունը, 3. ներկայացնել սոցիալական մեդիայի վերլուծության ձևերը և հիմնական սկզբունքները, 4. ձեռնարկությունների և սպառողների որոշումների կայացման գործընթացը բացատրելու համար կիրառել սոցիալական մեդիայի և թվային մարքեթինգի գործիքներ, 5. ցույց տալ շուկաների արդյունավետության բարձրացման հարցում սոցիալական ցանցերի դերը, 		

<p>6. Ուսումնասիրել մշակութային և թրենդային հետազոտությունների առանցքային բաղադրիչները՝ ձեռնարկությունների սոցիալական արշավներին տեղեկացնելու համար,</p> <p>7. Հասկանալ հաճախորդների ուսումնասիրման չափորոշիչները՝ բավարարելու նրանց կարիքները, ցանկությունները:</p> <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <p>8. կատարել մարքեթինգային վերլուծություններ ու կանխատեսումներ, օգտագործել դրանց արդյունքները,</p> <p>9. մարքեթինգային ռազմավարության մեթոդները կիրառել ձեռնարկատիրական վերլուծություններում:</p> <p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i></p> <p>10. օգտվել գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ),</p> <p>11. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր:</p>
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Ա1. նկարագրել տվյալների վերլուծության ժամանակակից մեթոդներն ու մոդելները</p> <p>Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)</p> <p>Գ2. ստեղծագործաբար կիրառել ձեռքբերված գիտելիքները, ընկալել և տարածել նորերը</p> <p>Գ3. կիրառել ձեռքբերված գիտելիքները մասնագիտական հանրություն հետ բանավոր և գրավոր հաղորդակցվելու ընթացքում</p> <p>Գ4. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր</p>
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <p>1. դասախոսություններ,</p> <p>2. նախադեպերի վերլուծություն,</p> <p>3. խմբային աշխատանք,</p> <p>4. անհատական աշխատանք:</p>
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Դասընթացն ավարտվում է հարցատոմսերով կազմակերպվող ստուգարքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ յուրաքանչյուրը՝ 5 միավոր.</p> <p>Միավորների քայլը 0.5 է:</p> <p>Ստուգումից 20-միավորանոց համակարգում 8 և ավելի միավոր ստացած ուսանողները կհամարվեն ստուգարքը հանձնած:</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1՝ Որոնողական համակարգերի օպտիմալացում (SEO)</p> <p>Թեմա 2՝ էլեկտրոնային մարքեթինգ և CRM</p> <p>Թեմա 3՝ Տվյալների բազայի կառավարման համակարգերի և կայքերի կապը</p> <p>Թեմա 4՝ Սոցիալական ցանցեր</p> <p>Թեմա 5՝ Գովազդային արշավների արդյունավետությունը սոցիալական ցանցերի միջոցով</p> <p>Թեմա 6՝ Վճարովի գովազդներ</p> <p>Թեմա 7՝ Ինչպես չափել վճարովի գովազդների արդյունավետությունը</p> <p>Թեմա 8՝ Մարքեթինգի ենթակառուցվածքը</p> <p>Թեմա 9՝ Մարքեթինգի արդյունավետության գնահատում որոշ հարթակների կիրառման միջոցով</p> <p>Թեմա 10՝ Գործընթացների ավտոմատացում</p> <p>Թեմա 11՝ Մարքեթինգի ենթակառուցվածքի ստեղծում</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <p>1. Cory Rabazinsky. Google Adwords for Beginners, 2014.</p> <p>2. Steve Krug; Don't Make Me Think, 2000.</p> <p>3. Alan Charlesworth, Digital Marketing: A Practical Approach, 2014</p> <p>4. Hermawan Kartajaya, Marketing 4.0, 2016</p>

1. 1007/Մ29	Տվյալների վերլուծության մաթ. մեթոդներ և հաշվարկներ	3. 6 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. դասախոս.՝ 2 ժամ, գործնական 2 ժամ	
6. Առաջին կիսամյակ	7. ԵԳ (2 ընթացիկ քննություն և եզրափակիչ քննություն)	
<p>8. Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • ուսանողների մոտ ձևավորել պատկերացում տնտեսամաթեմատիկական մոդելավորման և դրա կիրառությունների մասին, • սովորեցնել օպտիմիզացիայի մաթեմատիկական տեսության հիմնադրույթներն ու էքստրեմալ խնդիրների լուծման հիմնական եղանակները: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1. իրականացնելու իրավիճակների վերլուծություն և խնդրի ձևակերպում, 2. որոշելու հետազոտվող խնդրի (համակարգի) նպատակը, նկարագրել այլընտրանքային լուծումները, սահմանել վերջիններիս արդյունավետությունը, <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. կառուցել խնդրի մաթեմատիկական մոդելը և գտնել լավագույն լուծումը՝ համաձայն ընդունված նպատակի, 2. ընտրել խնդրի լուծման համապատասխան օպտիմիզացիոն մեթոդը՝ կախված խնդրի մաթեմատիկական դրվածքից, 3. լուծել մի շարք մաթեմատիկական մոդելավորման խնդիրներ՝ օգտվելով ժամանակակից ծրագրային փաթեթներից: <p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. օգտվել տեղեկատվության տարբեր աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), 2. պատրաստել ռեֆերատներ, կուրսային և ավարտական աշխատանքներ: 		
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <ul style="list-style-type: none"> • մեկնաբանել ստացված արդյունքները, ներկայացնել գործնական խնդիրների լուծման ձևերը և տարբերակները, • ներկայացնել քանակական, վիճակագրական, օպտիմիզացիոն և էկոնոմետրիկական հիմնական մեթոդներն ու մոդելները, որոնք օգտագործվում են միկրոտնտեսագիտական, մակրոտնտեսագիտական և ֆինանսական վերլուծությունների, որոշումների կայացման նպատակներով: • մաթեմատիկական անալիզի, բարձրագույն հանրահաշվի, անալիտիկ երկրաչափության, հավանականությունների տեսության և մաթեմատիկական վիճակագրության մեթոդները կիրառել գործնական խնդիրների լուծման նպատակներով: • շարունակաբար փոփոխվող միջավայրի պայմաններում փնտրել օպտիմալ լուծումներ, , աշխատել աշխատանքային խմբերում, իրականացնել հետազոտական և վերլուծական աշխատանք: • օգտվել մասնագիտական գրականությունից (այդ թվում՝ օտարալեզու) պատրաստել գիտական զեկուցումներ, վարել գիտական բանավեճեր: 		
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն, գործնական և սեմինար պարապմունքներ, 2. հանձնարարված գրականության ընթերցում և տնային աշխատանքների կատարում: 		
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>1-ին ընթացիկ քննություն.</p> <p>Անցկացվում է գրավոր, հարցատոմսով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 2 եւ 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p> <p>2-րդ ընթացիկ քննություն.</p> <p>Անցկացվում է բանավոր կամ գրավոր՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 1,0 է:</p> <p>Եզրափակիչ քննություն.</p> <p>Անցկացվում է հարցատոմսով, բանավոր՝ 10 միավոր առավելագույն արժեքով:</p>		

<p>Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3 եւ 3 միավոր: Միավորների քայքայ 0,5 է:</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <ol style="list-style-type: none"> 1.Ներածություն տվյալների վերլուծություն, 2. Ներածություն R և Python, 3. Գծային հանրահաշվի մի շարք կարևոր հասկացություններ տվյալների վերլուծության համար, 4. Հավանականությունների տեսության և վիճակագրության մի շարք կարևոր հասկացություններ տվյալների վերլուծության համար, 5. Բայեսիան գնահատում, բուտսթրափ, cross validation, ռեգուլյարիզացիա, 6. Չափողականության նվազեցում և փոփոխականների ընտրություն (PCA, ICA, NMF), 7. Գծային օպտիմիզացի, ոչ գծային օպտիմիզացիա, gradient descent, 8. Ոչ գծային ռեգրեսիա, կիսապարամետրիկ ռեգրեսիա 9. Դասակարգման մոդելներ՝ լոգիստիկ ռեգրեսիա, LDA, QDA: 10. Ծառերի վրա հիմնված մոդելներ՝ որոշումների ծառ, պատահական անտառ, բազինգ, բուստինգ:
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Frederick S. Hillier, Gerald J. Lieberman, Introduction to Operations Research, 10th Ed, McGraw-Hill Education, 2015 2. Edwin K. P. Chong, Stanislaw H. Zak, An Introduction to Optimization, 4th Ed, Volume 76 of Wiley Series in Discrete Mathematics and Optimization, John Wiley & Sons, 2013

1. 1002/Մ38	2. Տնտեսագիտություն տվյալագիտության համար	3. 3 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. դասախոս.՝ 4 ժամ	
6. Առաջին կիսամյակ	7. Ստուգաբլթ	
<p>8. Դասընթացի նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> • առավել ամբողջականացնել և խորացնել ուսանողների գիտելիքները միկրո- և մակրոտնտեսագիտության ասպարեզում, • զարգացնել տնտեսագիտական հետազոտություններում տնտեսագիտա-մաթեմատիկական մեթոդների և մոդելների կիրառման հմտություններ: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 12. ներկայացնել և հիմնավորել շուկայական տնտեսության տնտեսական հիմնահարցերի ուսումնասիրման համար անհրաժեշտ գիտելիքները 13. լուսաբանել միկրո- և մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, 14. ներկայացնել մակրոտնտեսական քաղաքականության ձևերը և հիմնական սկզբունքները, 15. ձեռնարկությունների և սպառողների որոշումների կայացման գործընթացը բացատրելու համար կիրառել միկրոտնտեսական մոդելներ, 16. բացատրել ռեսուրսների օպտիմալ բաշխման գործընթացները և ինչ դեր ունեն դրանցում շուկաները, 17. ցույց տալ շուկաների արդյունավետության բարձրացման հարցում պետությունների դերը, 18. ներկայացնել տնտեսական աճի հիմնական գործոնները և մոդելները 19. բացատրել, թե ինչպես է ձևավորվում գործազրկությունը և ինչ դեր ունի պետությունը այն նվազեցնելու հարցում, <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. կատարել տնտեսագիտական վերլուծություններ ու կանխատեսումներ, օգտագործել դրանց արդյունքները, 2. տնտեսագիտա-մաթեմատիկական մեթոդները կիրառել տնտեսագիտական վերլուծություններում: <p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. օգտվել գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ), 2. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր: 		

<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Ա4. մեկնաբանել միկրո- մակրոտնտեսագիտության հիմնական հասկացությունները, գլոբալ և լոկալ ֆինանսական շուկաների հիմնախնդիրները</p> <p>Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)</p> <p>Գ2. ստեղծագործաբար կիրառել ձեռքբերված գիտելիքները, ընկալել և տարածել նորերը</p> <p>Գ3. կիրառել ձեռքբերված գիտելիքները մասնագիտական հանրություն հետ բանավոր և գրավոր հաղորդակցվելու ընթացքում</p> <p>Գ4. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր</p>
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <p>5. դասախոսություններ,</p> <p>6. նախադեպերի վերլուծություն,</p> <p>7. խմբային աշխատանք,</p> <p>8. անհատական աշխատանք:</p>
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Դասընթացն ավարտվում է հարցատոմսերով կազմակերպվող ստուգարքով: Հարցատոմսը պարունակում է 4 հարց՝ յուրաքանչյուրը՝ 5 միավոր.</p> <p>Միավորների քայլը 0.5 է:</p> <p>Ստուգումից 20-միավորանոց համակարգում 8 և ավելի միավոր ստացած ուսանողները կհամարվեն ստուգարքը հանձնած:</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1՝ Շուկա: Պահանջարկ և առաջարկ: Առաձգականություն</p> <p>Թեմա 2՝ Հանրային հատված: Հանրային բարիքներ, արտաքին էֆեկտներ</p> <p>Թեմա 3՝ Ձեռնարկության տնտեսագիտություն: Արտադրության ծախսեր և եկամուտներ</p> <p>Թեմա 4՝ Մոնոպոլիաներ և օլիգոպոլիաներ</p> <p>Թեմա 5՝ Որոշումների կայացումը ոչ լիակատար տեղեկատվության պարագայում: Ռիսկ</p> <p>Թեմա 6՝ Խաղերի տեսությունը տնտեսագիտությունում</p> <p>Թեմա 7՝ Մակրոտնտեսագիտություն, ազգային եկամուտ</p> <p>Թեմա 8՝ Գործազրկություն, տնտեսական ցիկլեր</p> <p>Թեմա 9՝ Փող, բանկային համակարգ և ինֆլյացիա</p> <p>Թեմա 10՝ Միջազգային տնտեսագիտություն: Փակ և բաց տնտեսություններ</p> <p>Թեմա 11՝ Տնտեսական աճի հիմնական մոդելները</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <p>5. N. Gregory Mankiw. Principles of Economics, 8th Edition, Cengage learning, 2018.</p> <p>6. Campbell R. McConnell; Stanley L. Brue; Sean M. Flynn. Microeconomics: Principles, Problems, & Policies. McGraw-Hill Series in Economics, 20th Edition, 2014.</p> <p>7. Robert S. Pindyck; Daniel L. Rubinfeld. Microeconomics, 8th edition. The Pearson Series in Economics, 2012.</p> <p>8. Hal R. Varian. Intermediate Microeconomics: A Modern Approach. 9th edition, W. W. Norton & Company, 2014.</p> <p>9. Stephen D. Williamson. Macroeconomics, 6th Edition. The Pearson Series in Economics, 2017.</p>

1. 1002/Մ91	2. Data Mining տեխնոլոգիա	3. 3 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5 դասախոս.՝ 2 ժամ, սեմինար՝ 2 ժամ	
6. Երկրորդ կիսամյակ	7. ԱԸԳ (միայն եզրափակիչ քննություն)	
<p>8. Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • ծանոթացնել ուսանողին տվյալների ինտելեկտուալ վերլուծության հիմնական հասկացություններին, տեսական և գործնական սկզբունքներին, • սովորեցնել ուսանողներին կիրառել տվյալների ինտելեկտուալ վերլուծության մեթոդները գործնական խնդիրներ լուծելու համար, 		

<ul style="list-style-type: none"> • տալ գաղափար ալգորիթմների կառուցման և ծրագրավորման գործիքների օգնությամբ խնդիրներ լուծելու մասին:
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1. նկարագրել և կիրառել տվյալների ինտելեկտուալ վերլուծության մեթոդներն ու սկզբունքները, 2. ներկայացնել տնտեսագիտության մեջ օգտագործվող տվյալների վերլուծության մոդելները և դրանց իրականացման եղանակները, <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 3. օգտագործել տվյալների ինտելեկտուալ վերլուծության ալգորիթմները պրակտիկ խնդիրներում, 4. կատարել տվյալների մաքրում և տվյալներից անհրաժեշտ տեղեկատվության ստացում, 5. կատարել համեմատական վերլուծություն լավագույն մոդելը ընտրելու և կանխատեսումներ անելու նպատակով, <p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. օգտագործել գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և այլն) ստացված տեղեկատվություն, 2. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր, 3. կատարել գիտական հետազոտություններ
<p>10. Դասընթացը ձևավորում է <u>կրթական ծրագրի</u> հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Ա1. նկարագրել տվյալների վերլուծության ժամանակակից մեթոդներն ու մոդելները</p> <p>Ա2. ներկայացնել ժամանակակից հավանականային, օպտիմիզացիոն, վիճակագրական, էկոնոմետրիկ և այլ մեթոդների կիրառության առավել լայնորեն տարածված ուղղությունները</p> <p>Ա6. ներկայացնել առանձին կազմակերպության և շուկայի վերլուծության և կանխատեսման նպատակով օգտագործվող հիմնական կիրառական մեթոդները</p> <p>Բ1. ժամանակակից հավանականային, օպտիմիզացիոն, վիճակագրական, էկոնոմետրիկ և այլ մեթոդների կիրառմամբ կատարել հաշվարկներ և տնտեսական կանխատեսում</p> <p>Բ2. մասնագիտական տարբեր խնդիրները լուծելու համար օգտագործել համապատասխան համակարգչային փաթեթներ</p> <p>Բ4. գնահատման այլընտրանքային մոդելների կիրառմամբ գնահատել կազմակերպության գործունեության արդյունավետությունը</p> <p>Բ5. իրականացնել տարբեր ոլորտներում հավաքագրված տվյալների դասակարգում և քլաստերացում</p> <p>Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)</p> <p>Գ4. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր</p>
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություններ, 2. գործնական պարապմունքներ, 3. խմբային նախագծի կատարում, 4. անհատական աշխատանք:
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Դասընթացն առանց ընթացիկ գնահատման է: Նախատեսված եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը 20 միավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ համապատասխանաբար 7, 7 և 6 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0.5 է:</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1՝ Տվյալների ինտելեկտուալ վերլուծության գործընթաց, ներածություն</p> <p>Թեմա 2՝ Տվյալների նախապատրաստում՝ մաքրում, ուսումնասիրություն և վիզուալիզացիա</p> <p>Թեմա 3՝ Չույգային և բազմագործոն գծային ռեգրեսիա</p> <p>Թեմա 4՝ Ընդհանրացված գծային մոդելներ (Logit, Պուասոնի ռեգրեսիա)</p> <p>Թեմա 5՝ Ռեգուլարիզացիա (Ridge, Lasso, Elastic Net)</p> <p>Թեմա 6՝ Որոշումների ծառեր (CHAID), մեթոդների անսամբլ, Բայեսյան դասակարգում</p> <p>Թեմա 7՝ Հիերարխիկ և խտության վրա հիմնված քլաստերային վերլուծություն</p>

Թեմա 8՝ Ասոցիատիվ կանոնների որոնում Թեմա 9՝ Text Mining
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Tan P., Steinbach M., Kumar V. Introduction to Data Mining, Pearson Education (1st ed.), 2005 2. Gareth J., Witten D., Hastie T., Tibshirani R. An Introduction to Statistical Learning with Applications in R, Springer, 2013 3. Hastie T., Tibshirani R., Friedman J. The Elements of Statistical Learning, Springer (2nd ed.), 2008 4. Hand, Mannila, and Smyth. Principles of Data Mining. Cambridge, MA: MIT Press, 2001 5. Zhao Y. R and Data Mining: Examples and Case Studies, 2015

1. [1002/Մ91]	2. Ժամանակային շարքեր	3. 3] ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. դասախոս.՝ 2 ժամ	
6. Երկրորդ կիսամյակ	7. ԱԸԳ	
<p>8. Դասընթացի նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> • Զարգացնել ուսանողների մասնագիտական կարողությունները՝ տրամադրելով խորացված ուսուցում ժամանակային շարքերի էկոնոմետրիկայի տարատեսակ մեթոդների և մոդելների կիրառման վերաբերյալ: • Ուսանողներին ունակ դարձնել հաշվարկելու և կանխատեսելու տվյալների գիտության և մեքենայական ուսուցման մեջ կիրառվող ժամանակային շարքերի մոդելները օգտագործելով ժամանակակից վիճակագրական և էկոնոմետրիկ մեթոդներ: • Ծանոթացնել ուսանողներին մասնագիտացված համակարգչային ծրագրերին և դրանց կիրառությամբ ժամանակային շարքերի էկոնոմետրիկ վերլուծությանը: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 8. Գեներացնել տարբեր բնութագրերով ժամանակային շարքեր, օգտագործելով ժամանակակից համակարգչային ծրագրեր 9. Ներկայացնել տվյալների գիտությունում և մեքենայական ուսուցման ոլորտներում հանդիպող ժամանակային շարքերի վերլուծության մեթոդները և իրականացնել քանակական վերլուծություններ: 10. Կիրառել ARIMA մոդելները ժամանակային շարքերի վերլուծության համար և օգտագործել այդ մեթոդները պրակտիկ աշխատանքում: 11. Բացատրել VAR մեթոդների կիրառության սկզբունքները բազմաչափ ժամանակային շարքերի վերլուծության համար: 12. Բացատրել ոչ ստացիոնար շարքերի հետ աշխատելու սկզբունքները և կիրառել դրանց գնահատման մեթոդները: <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 4. կառուցել ֆինանսական ժամանակային շարքերի մոդելներ 5. օգտագործել հավանականային, օպտիմիզացիոն, վիճակագրական, տնտեսաչափական, թվային և այլ մաթեմատիկական մեթոդներ առաջացող մոդելները հետազոտելու համար 6. օգտագործել մասնագիտական ծրագրային ապահովում (R, E-views փաթեթներ) ստացվող խնդիրները լուծելու համար <p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ (եթե այդպիսիք կան)</i></p> <ol style="list-style-type: none"> 3. օգտվել մասնագիտական գրականությունից, տեղեկատվության այլ աղբյուրներից, 4. վերլուծել բնագավառի առկա խնդիրները և առաջարկել մոտեցումներ դրանց լուծման համար 		
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունք(ներ)ը.</p> <p>Ա1. նկարագրել տվյալների վերլուծության ժամանակակից մեթոդներն ու մոդելները</p> <p>Ա2. ներկայացնել ժամանակակից հավանականային, օպտիմիզացիոն, վիճակագրական, էկոնոմետրիկ և այլ մեթոդների կիրառության առավել լայնորեն տարածված ուղղությունները</p>		

<p>Ա6. ներկայացնել առանձին կազմակերպության և շուկայի վերլուծության և կանխատեսման նպատակով օգտագործվող հիմնական կիրառական մեթոդները</p> <p>Բ1. Ժամանակակից հավանականային, օպտիմիզացիոն, վիճակագրական, էկոնոմետրիկ և այլ մեթոդների կիրառմամբ կատարել հաշվարկներ և տնտեսական կանխատեսում</p> <p>Բ2. մասնագիտական տարբեր խնդիրները լուծելու համար օգտագործել համապատասխան համակարգչային փաթեթներ</p> <p>Բ4. գնահատման այլընտրանքային մոդելների կիրառմամբ գնահատել կազմակերպության գործունեության արդյունավետությունը</p> <p>Բ5. իրականացնել տարբեր ոլորտներում հավաքագրված տվյալների դասակարգում և քլաստերացում</p> <p>Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)</p> <p>Գ4. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր</p>
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <p>1. Դասախոսություն</p> <p>2. Պրակտիկ աշխատանքներ, օգտագործելով համակարգչային ծրագրերը</p> <p>3. Ինքնուրույն աշխատանք համակարգչային ծրագրերով և գրականության հետ:</p>
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Դասընթացն առանց ընթացիկ գնահատման է: Նախատեսված եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը 20 միավոր: Հարցատումը պարունակում է 3 հարց՝ համապատասխանաբար 7, 7 և 6 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0.5 է:</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p><i>Թեմա 1՝</i> Ժամանակային շարքերի վիզուալիզացիա</p> <p><i>Թեմա 2՝</i> Ժամանակային շարքերի գեներացում</p> <p><i>Թեմա 3՝</i> AR պրոցեսի հատկությունները:</p> <p><i>Թեմա 4՝</i> ARMA (p,q) ավտոռեգրեսսիոն-սողացող միջինի մոդելներ: Ավտոկորրելյացիոն և մասնավոր ավտոկորրելյացիոն ֆունկցիաներ:</p> <p><i>Թեմա 5՝</i> ARMA (p,q) պրոցեսների գործակիցների գնահատում: Ինֆորմացիոն չափանիշներ:</p> <p><i>Թեմա 6՝</i> Կանխատեսումը Բոքս-Ջենկինսի մոդելում:</p> <p><i>Թեմա 7՝</i> Ոչ ստացիոնար ժամանակային շարքեր:</p> <p><i>Թեմա 8՝</i> Միավոր արմատներ և կառուցվածքային տեղաշարժեր:</p> <p><i>Թեմա 9՝</i> Բաշխված լազերով ավտոռեգրեսսիոն մոդելներ: Էկզոգենության գաղափարը:</p> <p><i>Թեմա 10՝</i> Վեկտորային ավտոռեգրեսսիա: Ժամանակային շարքերի կոինտեգրում: Կոինտեգրացիոն ռեգրեսսիա:</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <p>1. J. D. Hamilton, Time Series Analysis, Princeton, 1994</p> <p>2. R.S. Tsay, Analysis of Financial Time Series, 2010</p> <p>3. Магнус, Катышев, Пересецкий, Эконометрика, Начальный курс, 2004</p>

1. 1002/Մ90	2. Տվյալների վիզուալիզացիա	3. 3 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. դասախոս.՝ 2 ժամ	
6. Երկրորդ կիսամյակ	7. ԱԸԳ	
<p>8. Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • ծանոթացնել ուսանողին տվյալների վերլուծության վիզուալիզացիոն մեթոդներին, • ձևավորել վիզուալիզացիոն տեխնիկաների՝ գործնական խնդիրներում կիրառելու հմտություն, 		

<ul style="list-style-type: none"> • սովորեցնել ստեղծել ինտերակտիվ web dashboard-ներ R Markdown և Shiny-ի միջոցով:
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <p>3. մեկնաբանել վիզուալիզացիայի եղանակների օգտագործման անհրաժեշտությունը և նպատակահարմարությունը</p> <p>4. ներկայացնել տնտեսագիտությունում տվյալների վիզուալիզացիայի տեխնիկաները և դրանց օգտագործելու եղանակները,</p> <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <p>6. օգտագործել տվյալների վիզուալիզացիայի մեթոդները առաջարկված գործնական խնդիրներ և լուծելու համար,</p> <p>7. իրականացնել ինտերակտիվ համեմատություններ վիզուալիզացիոն մեթոդների օգնությամբ,</p> <p>8. ստեղծել web dashboard-ներ մեծածավալ տվյալների վերլուծությունը հեշտ ու ընկալելի դարձնելու նպատակով,</p> <p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i></p> <p>4. օգտվել գիտական աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ),</p> <p>5. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր, կատարել թիմային աշխատանք</p>
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Ս1. նկարագրել տվյալների վերլուծության ժամանակակից մեթոդներն ու մոդելները</p> <p>Ս3. ներկայացնել առավել լայն տարածում գտած մասնագիտացված համակարգչային ծրագրերը, ինչպես նաև տնտեսագիտական վերլուծության համար դրանց կիրառության հիմնական ուղղությունները</p> <p>Բ2. մասնագիտական տարբեր խնդիրները լուծելու համար օգտագործել համապատասխան համակարգչային փաթեթներ</p> <p>Բ4. գնահատման այլընտրանքային մոդելների կիրառմամբ գնահատել կազմակերպության գործունեության արդյունավետությունը</p> <p>Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)</p> <p>Գ2. ստեղծագործաբար կիրառել ձեռքբերված գիտելիքները, ընկալել և տարածել նորերը</p> <p>Գ4. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր</p>
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <p>5. դասախոսություններ,</p> <p>6. գործնական պարապմունքներ,</p> <p>7. խմբային նախագծի կատարում,</p> <p>8. անհատական աշխատանք:</p>
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Դասընթացն առանց ընթացիկ գնահատման է: Նախատեսված եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը 20 միավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ համապատասխանաբար 7, 7 և 6 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 0.5 է:</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1՝ Վիզուալիզացիոն հիմնական տեխնիկաներ</p> <p>Թեմա 2՝ Բազմաչափ վիզուալիզացիա, քարտեզներ, ցանցեր</p> <p>Թեմա 3՝ Պատմողական վիզուալիզացիա (Narrative Visualization)</p> <p>Թեմա 4՝ R Shiny-ի ներածություն, Reactivity</p> <p>Թեմա 5՝ Ինտերակտիվ վիզուալիզացիա, D3-ի ներածություն</p> <p>Թեմա 6՝ Web dashboard-ների ստեղծում</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <p>6. Resnizky H. G., “Learning Shiny”, Oct. 2015</p> <p>7. Tufte E., “The Visual Display of Quantitative Information”, 2001</p> <p>8. Ware C., “Information Visualization: Perception for Design”, Second Edition</p>

1. 1002/Մ82	2. Մեքենայական ուսուցում 1002/Մ82	3. 6 ECTS կրեդիտ
4. 4 ժամ/շաբ.	5. դասախոս.՝ 3 ժամ, գործնական 1 ժամ	
6. Երկրորդ կիսամյակ	7. ԵԳ (2 ընթացիկ քննություն և եզրափակիչ քննություն)	
<p>8. Դասընթացի նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> • ծանոթացնել ուսանողներին մեքենայական ուսուցման առանձնահատկությունների հետ՝ տրամադրելով ընդհանրական գիտելիքներ մեքենայական ուսուցման վերաբերյալ, սովորեցնել տարբերել դրանց տարատեսակները, • զարգացնել ուսանողների մասնագիտական կարողությունները՝ ներկայացնելով մեքենայական ուսուցման հիմնական մոդելները, ուսուցման ալգորիթմները և օգտվել հայտնի գրադարաններից, • ուսանողներին ունակ դարձնել ինքնուրույն կիրառել մեքենայական ուսուցումը տարբեր խնդիրներ լուծելու համար: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնել մեքենայական ուսուցման հիմնական սկզբունքները և գաղափարները կիրառման ոլորտներն ու ձևերը, 2. բացատրել կոնկրետ խնդրի լուծման համար ընտրված մեդելի նպատակահարմարությունը, կառուցվածքը և աշխատանքի սկզբունքները և տարբերությունները գոյություն ունեցող այլ համակարգերից, <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. կատարել գոյություն ունեցող մոդելների օպտիմիզացիա՝ առավել լավ արդյունք ստանալու նպատակով, 2. կիրառել մեքենայական ուսուցման մեդելները կոնկրետ խնդիրների լուծման համար, 3. սահուն կերպով օգտագործել մեքենայական ուսուցման հայտնի գրադարանները մոդելներ կառուցելու և սովորեցնելու համար, այդ թվում նաև նեյրոնային ցանցերի համար, <p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. վերլուծել առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները, 2. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, 3. բանավոր և գրավոր հաղորդակցվել մասնագիտական հանրության հետ: 		
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Ա3. ներկայացնել առավել լայն տարածում գտած մասնագիտացված համակարգչային ծրագրերը, ինչպես նաև տնտեսագիտական վերլուծության համար դրանց կիրառության հիմնական ուղղությունները</p> <p>Բ2. մասնագիտական տարբեր խնդիրները լուծելու համար օգտագործել համապատասխան համակարգչային փաթեթներ,</p> <p>Բ3. բիզնես գործընթացների մոդելավորման և փաստաթղթային գործընթացներում կիրառել ամպային տեխնոլոգիաները,</p> <p>Բ5. իրականացնել տարբեր ոլորտներում հավաքագրված տվյալների դասակարգում և կլաստերացում,</p> <p>Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ),</p> <p>Գ2. ստեղծագործաբար կիրառել ձեռքբերված գիտելիքները, ընկալել և տարածել նորերը,</p> <p>Գ4. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր:</p>		
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. Դասախոսություն 2. Պրակտիկ աշխատանքներ, օգտագործելով համակարգչային ծրագրերը 3. Ինքնուրույն աշխատանք համակարգչային ծրագրերով և գրականության հետ: 		
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>1-ին ընթացիկ քննություն.</p> <p>Անցկացվում է գրավոր, հարցատոմսով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 2, 2 և 1 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p> <p>2-րդ ընթացիկ քննություն.</p>		

<p>Անցկացվում է բանավոր ներկայացման գնահատման հիման վրա՝ 5 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայլը 1,0 է:</p> <p>Եզրափակիչ քննություն.</p> <p>Անցկացվում է հարցատոմսով, բանավոր՝ 10 միավոր առավելագույն արժեքով: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 4, 3 և 3 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p><i>Թեմա 1՝</i> Ներածություն, մեքենայական ուսուցման կիրառությունները, հիմնարար գաղափարներ, վերահսկելի և անվերահսկելի ուսուցում:</p> <p><i>Թեմա 2՝</i> Գծային ռեգրեսիա, կորստի ֆունկցիաներ underfitting և overfitting գաղափարները:</p> <p><i>Թեմա 3՝</i> Լոգիստիկ ռեգրեսիա:</p> <p><i>Թեմա 4՝</i> Դասակարգման մոդելներ, ծառեր, անսամբլ մեթոդներ:</p> <p><i>Թեմա 5՝</i> Անվերահսկելի ուսուցում, համախմբում, չափողականության փոքրացում:</p> <p><i>Թեմա 6՝</i> Տվյալների վերլուծություն, բացակայող առժեքներ, նոր փոփոխականների կառուցում:</p> <p><i>Թեմա 7՝</i> Նեյրոնային ցանցեր, և հակադարձ տարածում:</p> <p><i>Թեմա 8՝</i> Փաթույթային նեյրոնային ցանցեր, նկարներում օբյեկտների ճանաչում:</p> <p><i>Թեմա 10՝</i> Ներածություն ամրապնդման ուսուցում:</p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Christopher Bishop, Pattern Recognition and Machine Learning, Springer, 2006. 2. Hands-On Machine Learning with Scikit-Learn and TensorFlow Concepts, Tools, and Techniques to Build Intelligent Systems <i>by Aurélien Géron, 2017</i> 3. Ian Goodfellow, Yoshua Bengio, Aaron Courville, Deep Learning, MIT Press, 2016. 4. Wouter Gevaert, Georgi Tsenov, Valeri Mladenov, Neural Networks used for Speech Recognition, Journal of automatic control, University of Belgrade, Vol. 20:1-7, 2010. 5. Alex Krizhevsky, Ilya Sutskever, Geoffrey E. Hinton, ImageNet Classification with Deep Convolutional Neural Networks, NIPS, 2012. 6. David E. Rumelhart, Geoffrey E. Hinton, Ronald J. Williams, Learning representations by back-propagating errors, Nature, Vol. 323, 1986.

1. 1002/Մ100	2. Մեծ տվյալների տեխնոլոգիաներ	3. 3 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5 դասախոս.՝ 2 ժամ	
6. Երրորդ կիսամյակ	7. ԱԳԸ (միայն եղրափակիչ քննություն)	
<p>8. Դասընթացի նպատակն է</p> <ul style="list-style-type: none"> • ուսանողներին ծանոթացնել մեծ տվյալների վերլուծության համար կիրառվող գործիքներին և տեխնոլոգիաներին, • սովորեցնել կիրառել այդ տեխնոլոգիաները պրակտիկ խնդիրների լուծման մեջ: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1. նկարագրել մեծ տվյալների վերլուծության համար կիրառվող տեխնոլոգիան ու գործիքները, 2. ճանաչել որ խնդիրներն են լուծվում մեծ տվյալների տեխնոլոգիաներով, որոնք՝ ոչ, 3. հասկանալ երբ մեծ տվյալների խնդիրները տվյալների ինտեգրացման կարիք ունեն, <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. մեծ տվյալների խնդիրները ներկայացնել և լուծել տվյալագիտության մեթոդներով, 2. տեղադրել և օգտագործել ծրագրերը Hadoop-ի միջոցով, 3. իրականացնել մեծ տվյալների ինտեգրացում ու մշակում Hadoop-ի միջոցով, <p><i>գ. քննհանրական/փոխանցելի կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. օգտագործել գիտական տարբեր աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և այլն) ստացված տեղեկատվություն, 2. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները 3. կատարել գիտական հետազոտություններ՝ օգտագործելով մեծ տվյալների տեխնոլոգիաները 		

<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Ա1. նկարագրել տվյալների վերլուծության ժամանակակից մեթոդներն ու մոդելները</p> <p>Ա3. ներկայացնել առավել լայն տարածում գտած մասնագիտացված համակարգչային ծրագրերը, ինչպես նաև տնտեսագիտական վերլուծության համար դրանց կիրառության հիմնական ուղղությունները</p> <p>Բ2. մասնագիտական տարբեր խնդիրները լուծելու համար օգտագործել համապատասխան համակարգչային փաթեթներ</p> <p>Բ4. գնահատման այլընտրանքային մոդելների կիրառմամբ գնահատել կազմակերպության գործունեության արդյունավետությունը</p> <p>Բ5. իրականացնել տարբեր ոլորտներում հավաքագրված տվյալների դասակարգում և քլաստերացում</p> <p>Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)</p> <p>Գ2. ստեղծագործաբար կիրառել ձեռքբերված գիտելիքները, ընկալել եւ տարածել նորերը</p> <p>3. Կիրառել ձեռքբերված գիտելիքները մասնագիտական հանրության հետ բանավոր և գրավոր հաղորդակցվելու ընթացքում</p>
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություններ, 2. գործնական պարապմունքներ, 3. խմբային նախագծի կատարում, 4. անհատական աշխատանք:
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Դասընթացը առանց ընթացիկ գնահատման է: Նախատեսված եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը 20 միավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 7, 7 և 6 միավոր: Միավորների քայլը 0,5 է:</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p>Թեմա 1՝ Մեծ տվյալների, ամպային հաշվարկի եւ տվյալների պահպանման ներածություն</p> <p>Թեմա 2՝ Linux Shell-ի և հրամանների ներածություն</p> <p>Թեմա 3՝ Hadoop-ի էկոհամակարգի ներածություն</p> <p>Թեմա 4՝ Հաշվարկներ MapReduce-ի միջոցով</p> <p>Թեմա 5՝ Hadoop Distributed File System (HDFS)</p> <p>Թեմա 6՝ Hadoop I/O</p> <p>Թեմա 7՝ MapReduce ծրագրերի ստեղծում և գործարկում</p> <p>Թեմա 8՝ Մեծ տվյալների մշակումը Pig-ի միջոցով</p> <p>Թեմա 9՝ Տվյալների վերլուծություն Hive-ի միջոցով</p> <p>Թեմա 10՝ HBase-ը որպես ոչ ռելացիոն տվյալների բազայի համակարգ</p> <p>Թեմա 11՝ Ընդհանուր բաշխված ծրագրերի ստեղծում Zookeeper-ի միջոցով</p> <p>Թեմա 12՝ Ոչ ռելացիոն տվյալների բազաների ներածություն</p> <p>Թեմա 13՝ Spark-ը որպես արագ հաշվարկների գործիք հիշողությունում(in-memory)</p>
<p>14. ա. Հիմնական գրականություն.</p> <ol style="list-style-type: none"> 1. Hadoop: The Definitive Guide, Third Edition by Tom White <p>Բ. Լրացուցիչ գրականություն</p> <ol style="list-style-type: none"> 1. Kafka: The Definitive Guide by Neha Narkhede, Gwen Shapira, and Todd Palino 2. Data Algorithms by Mahmoud Parsian 3. HBase: The Definitive Guide by Lars George 4. Programming Hive by Edward Capriolo, Dean Wampler, and Jason Rutherglen 5. ZooKeeper by Flavio Junqueira and Benjamin Reed 6. Kafka: The Definitive Guide by Neha Narkhede, Gwen Shapira, and Todd Palino

1. 1002/U95	2. Լայնամասշտաբ վերլուծություն (Large-scale analytics)	3. 3 ECTS կրեդիտ
-------------	--	------------------

4. 2 Ժամ/շաբ.	5. դասախոս.՝ 1 Ժամ, գործնական 1 Ժամ
6. Երրորդ կիսամյակ	7. ԱԸԳ (միայն եզրափակիչ քննություն)
<p>8. Դասընթացի նպատակն է՝</p> <ul style="list-style-type: none"> • զարգացնել ուսանողների մասնագիտական կարողությունները՝ տրամադրելով գիտելիքներ մեծ տվյալների վրա լայնամասշտաբ վերլուծությունների հնարավոր կիրառությունների վերաբերյալ, • սովորեցնել կիրառել լայնամասշտաբ վերլուծության առկա այգորիթմները համապատասխան խնդիրների լուծման համար, ինչպես նաև մշակել իրենց սեփական այգորիթմները: 	
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1. քննարկել և կիրառել տվյալների լայնամասշտաբ վերլուծության և մեքենայական ուսուցման հիմնական գաղափարները և գործիքակազմը՝ օգտագործելով ժամանակակից տեխնոլոգիաները և հարթակները, 2. բացատրել, թե մեծ տվյալները՝ հիմնականում համացանցից վերցված, ինչպես կարող են օգտագործվել խորհրդատու համակարգեր ստեղծելու և անհատականացված ծառայություններ մատուցելու համար, <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. արագ հարմարվել տվյալների վերլուծության անձանոթ ծրագրային փաթեթներին և կարողանալ օգտագործել դրանք իր առջև դրված խնդիրների լուծման համար, 2. պրոցեսների ավտոմատացման խնդիրների լուծման համար կիրառել լայնամասշտաբ վերլուծությունների տարբեր մեթոդներ, <p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. վերլուծել առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները, 2. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, 3. բանավոր և գրավոր հաղորդակցվել մասնագիտական հանրության հետ 4. ցուցադրել խմբային աշխատանքներում մասնակցելու հմտություններ՝ ինժեներական, գիտական և բիզնես միջավայրերում: 	
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Ա1. նկարագրել տվյալների վերլուծության ժամանակակից մեթոդներն ու մոդելները</p> <p>Բ2. մասնագիտական տարբեր խնդիրները լուծելու համար օգտագործել համապատասխան համակարգչային փաթեթներ</p> <p>Բ3. բիզնես գործընթացների մոդելավորման և փաստաթղթային գործընթացներում կիրառել ամպային տեխնոլոգիաները</p> <p>Բ5. իրականացնել տարբեր ոլորտներում հավաքագրված տվյալների դասակարգում և քլաստերացում</p> <p>Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)</p> <p>Գ2. ստեղծագործաբար կիրառել ձեռքբերված գիտելիքները, ընկալել և տարածել նորերը</p> <p>Գ4. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր</p>	
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <ol style="list-style-type: none"> 1. դասախոսություն, 2. պրակտիկ աշխատանքներ՝ օգտագործելով համակարգչային ծրագրերը, 3. ինքնուրույն աշխատանք համակարգչային ծրագրերով և գրականության հետ: 	
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Դասընթացն առանց ընթացիկ գնահատման է: Նախատեսված եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը 20 միավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց՝ համապատասխանաբար 7, 7 և 6 միավոր առավելագույն արժեքով: Միավորների քայքայ 0.5 է: Քննությունը անց է կացվում համակարգիչով:</p>	
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p><i>Թեմա 1՝</i> Մեքենայական ուսուցում մեթոդների կիրառությունը մեծ տվյալների համար:</p> <p><i>Թեմա 2՝</i> Ներածություն՝ մեծ տվյալների գործիքակազմի կիրառությունը մեքենայական ուսուցման համար (Mahout, Spark):</p> <p><i>Թեմա 3՝</i> Ամպային համակարգեր՝ Hadoop, MapReduce:</p> <p><i>Թեմա 4՝</i> Տվյալների նախնական մշակում:</p>	

<p><i>Թեմա 5` Խորհրդատու համակարգեր (Recommendation systems):</i></p> <p><i>Թեմա 6` Համացանցի տվյալների ուսումնասիրություն (Web data mining):</i></p> <p><i>Թեմա 7` Convolutional նեյրոնային ցանցեր:</i></p>
<p>14. Հիմնական գրականության ցանկ.</p> <ol style="list-style-type: none"> 1. Recommender Systems: The textbook, by Charu Aggarwal Springer, 2016, ISBN 978-3-319-29659-3. 2. Sentiment Analysis and Opinion Mining, by Bing Liu, Morgan & Claypool publishers, May 2012. 3. Social Media Mining, An Introduction, by Reza Zafarani, Mohammad Ali Abasi, Huan Liu Cambridge University Press, 2014. 4. Networks, Crowds, and Markets, by D. Easley and J. Kleinberg Cambridge University Press, 2010. 5. Mining of Massive Datasets, by Jure Leskovec, Anand Rajaraman and Jeffrey Ullman, 2nd edition, Cambridge University Press, December 2014. 6. Opinion Mining and Sentiment Analysis, by Bo Pang and Lillian Lee, in Foundations and Trends in Information Retrieval, Vol.2, No. 1-2 (2008). 7. Web Data Mining: Exploring Hyperlinks, Contents, and Usage Data, by Bing Liu Springer (2011), ISBN: 3540378812. 8. Recommender Systems Handbook, Francesco Ricci, Lior Rokach, Bracha Shapira, and Paul B. Kantor, editors, Springer US, 2011, ISBN: 978-0-387-85819-7. 9. Data Mining: Concepts and Techniques, by Jiawei Han, Micheline Kamber and Jian Pei Morgan Kaufmann, Elsevier Inc. (2011), ISBN: 9780123814791.

1. 1002/U97	2. Ամպային համակարգերի կառավարում և տեղեկատվական անվտանգություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.	5. դասախոս.՝ 2 ժամ	
6. Երկրորդ կիսամյակ	7. ԱԳԸ (միայն եղրափակիչ քննություն)	
<p>8. Դասընթացի նպատակն է ներկայացնել՝</p> <ul style="list-style-type: none"> • ամպային համակարգերի մասին հիմնարար բաշխված հաշվողական «հասկացությունները», ինչպես նաև առավել լայնորեն օգտագործվող ամպային համակարգերի գործունեության սկզբունքները, • ամպային և լոկալ միջավայրում տեղեկատվական անվտանգության հիմնարար գաղափարները և դրանց կիրառման արդյունավետ մեթոդները: 		
<p>9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝</p> <p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <ol style="list-style-type: none"> 1. ներկայացնել ամպային միջավայրում հավելված ստեղծելու գործընթացի հիմնական տարրերը, 2. բացատրել UNIX ֆայլերի և համակարգերի կիրառության էֆեկտիվությունը, 3. նկարագրել տեղեկատվական անվտանգության հիմնական մեթոդները, 4. տիրապետել IBM Bluemix ամպային համակարգի հնարավորություններին, <p><i>բ. գործնական մասնագիտական կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. ստեղծել նոր հավելվածներ ամպային միջավայրում, 2. օգտագործել մասնագիտացված մեթոդներ հաքերներից պաշտպանվելու համար, 3. իրականացնել գործնական աշխատանքներ IBM Bluemix միջավայրում, <p><i>գ. ընդհանրական/փոխանցելի կարողություններ</i></p> <ol style="list-style-type: none"> 1. վերլուծել առկա խնդիրները և գնահատել դրանց լուծման համար անհրաժեշտ ռեսուրսները 2. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից, 3. բանավոր և գրավոր հաղորդակցվել մասնագիտական հանրության հետ: 		
<p>10. Դասընթացը ձևավորում է կրթական ծրագրի հետևյալ վերջնարդյունքները.</p> <p>Բ2. մասնագիտական տարբեր խնդիրները լուծելու համար օգտագործել համապատասխան համակարգչային փաթեթներ</p> <p>Բ3. բիզնես գործընթացների մոդելավորման և փաստաթղթային գործընթացներում կիրառել ամպային տեխնոլոգիաները</p>		

<p>Գ1. օգտվել տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետային ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, գիտական հոդվածներ և հաշվետվություններ)</p> <p>Գ2. ստեղծագործաբար կիրառել ձեռքբերված գիտելիքները, ընկալել և տարածել նորերը</p> <p>Գ3. կիրառել ձեռքբերված գիտելիքները մասնագիտական հանրություն հետ բանավոր և գրավոր հաղորդակցվելու ընթացքում</p> <p>Գ4. պատրաստել զեկուցումներ, ներկայացնել հետազոտությունների արդյունքները, վարել գիտական բանավեճեր</p>
<p>11. Կիրառվում են դասավանդման և ուսումնառության հետևյալ ձևերն ու մեթոդները.</p> <p>1. դասախոսություն,</p> <p>2. պրակտիկ աշխատանքներ՝ օգտագործելով համակարգչային ծրագրերը,</p> <p>3. ինքնուրույն աշխատանք՝ ամպային միջավայրում հավելվածի ստեղծում:</p>
<p>12. Գնահատման մեթոդները և չափանիշներն են.</p> <p>Դասընթացը առանց ընթացիկ գնահատման է: Նախատեսված եզրափակիչ քննությունը գնահատվում է առավելագույնը 20 միավոր: Հարցատոմսը պարունակում է 3 հարց, յուրաքանչյուրը՝ համապատասխանաբար 7, 7 և 6 միավոր: Միավորների քայքայը 0,5 է:</p>
<p>13. Դասընթացը բաղկացած է հետևյալ հիմնական բաժիններից.</p> <p><i>Թեմա 1՝</i> Ամպային ծրագրավորման հիմնային կոմպոնենտները:</p> <p><i>Թեմա 2՝</i> Հիմնադրամներ. կոնտեյներներ, վիրտուալ մեքենաներ, JVM (Java վիրտուալ մեքենա):</p> <p><i>Թեմա 3՝</i> MAAS, PAAS, Web ծառայություններ:</p> <p><i>Թեմա 4՝</i> Պահեստ. Ceph, SWIFT, HDFS, NAAS, SAN, Zookeeper համակարգեր:</p> <p><i>Թեմա 5՝</i> Ծրագրավորում ամպային միջավայրում՝ օգտվելով www.istc-ysu.onthehub.com և IBM Bluemix ամպային ծրագրավորման հարթակից:</p> <p><i>Թեմա 6՝</i> Ցանցային անվտանգության հիմունքներ:</p> <p><i>Թեմա 7՝</i> UNIX ֆայլեր և համակարգեր:</p> <p><i>Թեմա 8՝</i> IP, DHCP, DNS և անլար ցանցերի կառավարում:</p> <p><i>Թեմա 9՝</i> Կրիպտոգրաֆիա և ինչպես պաշտպանվել:</p>
<p>Հիմնական գրականության ցանկ</p> <ol style="list-style-type: none"> 1. Thomas A. Limoncelli, Strata R. Chalup, Christina J. Hogan, The Practice of Cloud System Administration: DevOps and SRE Practices for Web Services 2. Imad M. Abbadi, Cloud Management and Security 3. Lee Chao, Cloud Database Development and Management 4. Al Bento (Author, Editor), A. K. Aggarwal, Cloud Computing Service and Deployment Models: Layers and Management

1. 1002/	Բայեսյան վիճակագրություն	3. 3 ECTS կրեդիտ
4. 2 ժամ/շաբ.		5. դասախոս.՝ 2 ժամ
6. Երկրորդ կիսամյակ		7. ԱԸԳ (միայն եզրափակիչ քննություն)
8. Դասընթացի նպատակն է՝	<ul style="list-style-type: none"> • Զարգացնել ուսանողների մասնագիտական կարողությունները՝ տրամադրելով խորացված ուսուցում բայեսյան վիճակագրության տարատեսակ մեթոդների և մոդելների կիրառման վերաբերյալ: • Ուսանողներին ունակ դարձնել կիրառել բայեսյան վիճակագրության վերլուծության մեթոդները սովյալների գիտության և մեքենայական ուսուցման մեջ: • Ծանոթացնել ուսանողներին մասնագիտացված համակարգչային ծրագրերին և դրանց կիրառությամբ բայեսյան վիճակագրության վերլուծություն իրականացնելուն: 	
9. Դասընթացի ավարտին ուսանողն ունակ կլինի՝	<p><i>ա. մասնագիտական գիտելիք և իմացություն</i></p> <p>13. Կիրառել բայեսյան գնահատումներ տարատեսակ տվյալների համար</p>	

